ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N _____ «_____» _____ 20 թ.

Ձեր

«Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ (ՀՎՀՀ 40057826)
Ք.Երևան, Խանջյան 31 Ա
էլ. հասցե՝ kananyan0102@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ -ի միջև 10 հունվարի 2022թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ–2022–ՃՈ/ԹՈՒՂԹ/Ա–22–1 ծածկագրով Ա4 ֆորմատի թղթի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 03 մարտի 2022թ–ին կնքված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ–2022–ՃՈ/ԹՈՒՂԹ/Ա–22–1 գնման պայմանագրի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում «Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ-ի միջև 10 հունվարի 2022թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ–2022–ՃՈ/ԹՈՒՂԹ/Ա–22–1 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ -ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի ««Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 1 467 000 /մեկ միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար/ ՀՀ դրամ, և տուժանքի համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 978 000 /ինը հարյուր յոթանասունութ հազար/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ոստիկանության գնդապետ ***Վ.Մովսիսյան***

Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռ. 58-57